

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԵՄ

Ամեն Կիրակի եկեղեցի կը յաճախենք, ներկայ կը գտնուինք Ս. Պատարագին, Պատարագի ընթացքին կը հաղորդուինք եւ նախքան հաղորդուիլը կը խոստովանինք մեր մեղքերը զոջումին հետեւելով, որ կը կարդացուի Սարկաւագին կողմէն: Չոջում ու խոստովանանք: Մեր մեղքերը կը խոստովանինք Աստուծոյ առջեւ:

Խոստովանութիւնը Աստուծոյ կողմէ մեզի տրուած մեծ բարիք եւ պարգեւ, նաեւ հոգիի կենդանութիւն եւ բժշկութիւն է: Շատեր տգիտութեան հետեւանքով յիմարաբար կորսուած են մեղքերու մէջ եւ զրկած են իրենց անձերը խոստովանութեան շնորհքէն: Բազմաթիւ են անոնք, որոնք առանց խոստովանութեան ու հաղորդութեան կը մնան. ոմանք՝ որովհետեւ չեն գիտեր խոստովանութեան շնորհքն ու բարիքը, ուրիշներ՝ անչնայուն եւ վախճայուն համար չեն խոստովանիր, իսկ ուրիշներ՝ որովհետեւ ընկղմած ու կորսուած են մեղքերու մէջ, չեն ուզեր ազատիլ սատանայի ծառայութենէն:

Արդ, մի՛ անգիտանաք: Խոստովանութիւնը բժշկութիւն է հոգիներու համար, փախուստ է դժոխքէն, ազատութիւն է սատանայէն եւ յարութիւն է մահէն: Հետեւաբար, կը պատուիրենք, որ ամեն Կիրակի եկեղեցոյ դուռը երթաք եւ խոստովանիք: Քահանային ներկայութեան ձեր ունեցած փոքր վախով ու ամօթով կը փրկուիք այն մեծ ամօթէն, որ տիեզերական ասեղ հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ, այն մեծ Կիրակին որ անփոխարինելի է, երբ մարդոց բոլոր ծածուկ ու գաղտնի գործերը պիտի յայտնուին:

ԼԱՊՏԵՐ



Լապտերը եկեղեցական թափօրները ճոխացնող, մասնաւոր փայտէ ձողունի մը վրայ ամրացուած, ապակիէ փեղկերով այն տուփն է, որուն մէջ վառող մոմը յատկապէս բացօթեայ թափօրներուն՝ գերծ կը մնայ մարելէ:

Ինչպէս կեռոնները զոյգ կը գործածուին, նմանապէս լապտերները զոյգ դպիրներու կողմէ բացրացուած կը հետեւին թափօրի մեծ խաչին՝ Խաչվառին:

Հակառակ, որ տօնացոյցին մէջ յաճախ կը յիշատակուի լապտերներու գործածութիւնը, սակայն մեր եկեղեցոյ մէջ չէ ընդհանրացած այդքան:

Յոյն եւ Լատին Եկեղեցիները կեռոններու փոխարէն լապտերներ կը գործածեն:

Վերջին տասնամեակներուն Տեառնընդառաջի նախատօնակի երեկոյեան, Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան ճրագալոյցներուն, հաւատացեալներու կողմէ փոքր լապտերներ սկսան գործածուիլ, եկեղեցոյ կանթեղէն առնուած լոյսը, առանց մարելու ապահով տուն հասցնելու համար:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 1 ՄԱՅԻՍ 2022

ԹԻՒ 18

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գրծ. 9.23-31: Ա. Ժտ. 2.1-10: Յհ. 2.23-3.12

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ (ԿԱՆԱԶ ԿԻՐԱԿԻ)

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԿԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎԱՆՆԵՍ 2.23-3.12

Չատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չուներ ռեւ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր, թէ ի՛նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողէմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապէ՛տ, գիտե՛նք, որ դուն Աստուծոյ կողմէ ղրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ որ կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չձնի՛ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողէմոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ բան է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չձնի՛ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ զարմանար, որ քեզի ըսի, թէ պէտք է կրկին ծնիք: Հովը, ուր որ ուզէ կը փչէ: Դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր, թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողէմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն, որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատար ինձի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՅ ԿԻՐԱԿԻ

Աշխարհամատուռ կը նշանակէ երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Զատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատուռ կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքեալներու կողմէ:

Առաքեալները Յիսուսի կարգադրութեան համաձայն, Իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը ճաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքութեան առաջին աղօթավայրը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին՝ Աշխարհամատուռ, եւ անոր յիշատակին եկեղեցւոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատուռն տօնը կրօնական եւ եկեղեցական տեսակետէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ: Ան Քրիստոսի հաստատած իտէլա եկեղեցին էր եւ այս օրերու քրիստոնէայ աշխարհի, մանաւանդ եկեղեցւոյ կրօնապետներու երազած իտէլա եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնէաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատուռն Կիրակին կը կոչուի նաեւ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումի նշգրիտ իմաստը դժբախտաբար ծանօթ չէ մեզի: Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցւոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ աճող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ, որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիրը, աճեցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհին վրայ տարածուած եկեղեցին:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞նչ է խունկին եւ խնկարկութեան նշանակութիւնը:

Աստուծոյ խունկ մատուցելը կը նշանակէ սրտի խորերէն վեր բարձրացող ջերմեռանդ աղօթք, որ հանելի է Աստուծոյ առջեւ ու նաեւ յարգանքի եւ օրհնութեան արտայայտութիւնն է մարդուն իր Արարիչին հանդէպ:

Ժողովուրդին խնկարկելը կը նշանակէ Աստուծոյ շնորհաց բաշխում, գոր կը կատարէ պատարագիչ քահանան թափօրի ատեն իր օրհնութեան աղօթքներով միատեղ: Պատարագի ընթացքին ալ, երբ պատարագիչը մէջ ընդ մէջ օրհնութիւն կը բաշխէ, սարկաւազը որպէս Ս. Սեղանի սպասուոր եւ օգնական քահանայի, անոր հետ կը դառնայ դէպի ժողովուրդը եւ կը խնկարկէ:

Սարկաւազին կողմէ քահանային կատարուած խնկարկութիւնը յարգանքի արտայայտութիւնն է Աստուծոյ ծառային՝ դեսպանին հանդէպ:

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ԲԺՇԿԱԿԱՆ ԼԵՋՈՒ ՈՐՆԵՅՈՂՆԵՐԸ ՅԻՍՈՒՍԻ ՔԱՂՅՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՄԱԿՈՒՎՃՆԵՐՆ ԵՆ

Մարդիկ կան, որոնք իրենց անմիտ խօսքերով սուրի նման կը խոցեն, բայց իմաստունին լեզուն կը բժշկէ (Առ. 12.18): Խօսեցանք ստախօս, գրպարտիչ, բամբասող եւ քսու լեզու ունեցողներուն մասին, հիմա խօսինք բժշկարար լեզու ունեցողներուն մասին: Որո՞նք են անոնք: Առաջին հերթին անոնք Յիսուսի յանձնուած եւ Յիսուսի քաղցրութեամբ համակուած մարդիկն են: Յիսուսի քաղցրութիւնը ճաշակած անձ մը՝ քաղցր ներկայութիւն կ'ըլլայ այլոց կեանքին մէջ: Այսպիսի մարդիկ, որոնք Յիսուսի քաղցրութիւնը կ'արտացոլացնեն, բժշկարար, մխիթարար եւ գօտեպնդիչ լեզու կ'ունենան:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՂԱՍԸ

Դուն յանձնուած եւ Քրիստոսի: Եթէ չես յանձնուած, զուր տեղ մի աշխատիր խօսիլ մարդոց Յիսուսի քաղցրութեան մասին: Մարդիկ քաղցրութեամբ պիտի չընկալեն քեզմէ Տիրոջ խօսքը, եթէ դուն Տիրոջ քաղցրութեամբ չես լեցուած: Նախ հանդիպիր ամենաքաղցր Յիսուսին, եւ անկէ ետք միայն հանդիպիր նմաններուդ, եւ պիտի տեսնես արդիւնքը:

ՄԻՇՏ Ա.ՂՕԹԵՆՔ ԱՌԱՆՑ ՎՀԱՏԵԼՈՒ

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ ԿՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԿՈՒՉԵՍ ԳԻՏԱԿ, ԹԷ ԱՍՏՈՒՄԸ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՊԼՇՏՊԱՆԷ ԱՐԳԱՎԱՐԸ, ՄԻԱՍՆԱԲԱՐ ԿԱՐԳԱՆՔ՝ Սաղմոս 7

ՏԷՐ, Աստուածս, յոյսս քու վրադ դրած եմ. փրկէ եւ ազատէ՝ զիս բոլոր հալածիչներէս: Չըլլայ, որ առիծի պէս իմ անձս գիշատեն, բզկտեն զիս եւ ազատող մը չունենամ:

ՏԷՐ, Աստուածս, եթէ յանցանք մը գործեցի, կամ ձեռքերուս մէջ անիրաւութիւն կայ, եթէ ինձի բարիք ընողին չարիք հասցուցի, կամ դրկեցի առանց պատճառի ինձի թշնամացողը, թող թշնամին վրաս յարձակի եւ հալածէ իմ անձս, թող զգետնէ ու խորտակէ իմ կեանքս եւ իմ փառքս փոշիի վերածէ:

Ե՛ւ, ո՛վ ՏԷՐ, բարկութեամբ ցցուէ նեղիչներու կատաղութեան դէմ: Արթնցի՛ր, ո՛վ իմ Աստուածս, դուն՝ որ իրաւունքը կը հաստատես:

Ժողովուրդները մեծ բազմութեամբ թող քու շուրջդ խմբուին, եւ դուն՝ քու բարձրութենէդ տիրէ անոնց վրայ:

Դուն, որ կը դատես ժողովուրդները ո՛վ ՏԷՐ, դատէ՛ զիս, որ արդար եմ եւ անմեղ:

Թող վերջ գտնէ ամբարիշտներու չարութիւնը եւ դուն արդարը հաստատէ, որովհետեւ դուն, արդար Աստուած, կը քննես մարդոց մտածումներն ու ցանկութիւնները:

Շարունակել Սաղմոսագիրքէն